Հավելված N 1
Արենի համայնքի ավագանու
14.11.2022թվականի թիվ 131-Ա որոշման

ԿԱՐԳ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ

1. Արենի համայնքի նորընտիր ղեկավարի կողմից իր լիազորությունները ստանձնելուց հետո տեղի է ունենում համայնքի ղեկավարի երդման արարողությունը (այսուհետ՝ Արարողություն): Այդ արարողությանը կարող են ներկա գտնվել Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաներ, պետական լիազոր մարմնի և Վայոց ձորի մարզպետարանի ներկայացուցիչներ, հրավիրվել պետական, հասարակական, մշակութային, կրոնական կազմակերպությունների գործիչներ, պատվավոր հյուրեր:
2. Արարողությունը վարում է ավագանու տարիքով ավագ անդամը (այսուհետ՝ Արարողությունը վարող), որը հայտարարում է նորընտիր ավագանու առաջին նիստի բացման մասին:
3. Արարողությունն իրականացվում է հետևյալ ընթացակարգով.
1) Հնչեցվում է Հայաստանի Հանրապետության օրհներգը,
2) Արարողությունը վարողը ամբիոնի մոտ է հրավիրում Համայնքի նորընտիր ղեկավարին,
3) Համայնքի ղեկավարն ընթերցում է երդման տեքստը և ստորագրում դրա տակ, ստորագրված երդման տեքստը ի պահ է հանձնվում Համայնքապետարանի աշխատակազմին,
4) Նորընտիր Համայնքի ղեկավարը կարող է հանդես գալ ելույթով: Ելույթի համար տրվում է մինչև երեսուն րոպե ժամանակ:
4. Ելույթից հետո նիստը նախագահողը Ավագանու նիստի նախագահությունը փոխանցում է Համայնքի ղեկավարին: Պաշտոնապես իր պարտականությունները ստանձնած Համայնքի ղեկավարին և նորընտիր Ավագանուն իրենց ողջույնի խոսքն են ուղղում հրավիրված պաշտոնատար անձինք և պատվավոր այլ հյուրեր: Դրանով Ավագանու նիստը համարվում է ավարտված: Ավարտից հետո Համայնքապետարանում կարող է տեղի ունենալ հյուրերի պաշտոնական ընդունելություն:

Աշխատակազմի քարտուղար Գ. Սիմոնյան